Արձանագրություն N 3

Երևան քաղաքի 10 վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

26.05.2020թ.
Ժամը՝ 15:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան/գնահատող/, Ա. Սարգսյան / գնահատող /, Կ. Հարությունյան /բացող/, Ռ. Գրիգորյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. «ԵՔ-ԲՄԾՁԲ-20/28» ծածկագրով գնման ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Կիրակոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 12.05.2020 թվականին ընթացակարգի ընտրված մասնակիցներին համապատասխան չափաբաժինների մասով ներկայացվել էր պայմանագրեր կնքելու առաջարկներ: Մասնակիցները պարտավոր էին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 25.05.2020 թվականը/ պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, որը Ընկերության կողմից չի տրամադրվել.

- Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի կողմից /10-րդ չափաբաժնի մասով/ սահմանված ժամկետում ներկայացվել է իր կողմից հաստատված պայմանագիրը և վերը նշված ապահովումները,

- ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ-ի /3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով/ և ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ-ի /1-ին, 2-րդ, 5-9-րդ չափաբաժինների մասով/ կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել իրենց կողմից հաստատված պայմանագրերը և վերը նշված ապահովումները,

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ-ն և ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ-ն ծանուցված չափաբաժինների մասով համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի զրկվում են պայմանագիր կնքելու իրավունքից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

-ընթացակարգի 1-ին և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ին,

-ընթացակարգի 2, 5, 6, 7 և 8-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել ԷԼ-ՍԹՐՈՅ ՍՊԸ -ին,

- հաշվի առնելով, որ ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են գնման առարկաների նախահաշվային արժեքները՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անցկացնել գների նվազեցման բանակցություններ՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի:

1.2 Ելնելով երկրում առկա արտակարգ դրության պայմաններից և հաշվի առնելով, որ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով բանակցությանը մասնակցում է միայն ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ ՓԲԸ-ն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց առաջարկել մասնակցին իր կողմից ներկայացվող նոր /նվազեցված/ գնային առաջարկը ներկայացնել էլեկտրոնային փոստի միջոցով /ani.hambardzumyan@yerevan.am/ մինչև 2020 թվականի հունիսի 2-ը ժամը 11:00-ն և որը պարտադիր պետք է հաստատված լինի էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Կիրակոսյան

Անդամներ՝ ---------- Ռ. Գրիգորյան

---------- Ա. Սարգսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան